# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

N 16-Ա 06.08.2012թ.

**ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով՝

### Ավագանին որոշեց՝

1. Բուրաստանի համայնքային սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի 19766340հազար դրամ հաշվեկշռային արժողության /8844գծմ/ համակարգերը մինչև 2037թ. հուլիսի 1-ը Հ Հ Կառավարության 22.12.2011թ. N1851-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման» պայմանագրով հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Բուրաստանի համայնքի ղեկավար պարոն Ֆ. Առաքելյանին՝ սահմանված կարգով Հ Հ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել, սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

**Ավագանու անդամներ՝**

1. ____________________/ Սարգիս Հարությունյան/
2. ____________________/ Գրիգոր Գրիգորյան/
3. ____________________/ Ռուդիկ Առաքելյան/
4. ____________________/ Սերգո Ղազարյան/
5. ____________________/Վահե Հայրապետյան/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ / Ֆ. ԱՌԱՔԵԼՅԱՆ/

/ստորագրություն /